


# ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150- ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ «ԴԱՐԻՑ ԵՐԿԱՐ» ԽՈՐԱԳՐՈՎ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

*Posted on October 25, 2022 by Keghart*



Category: [Opinions](#)



## Նառա Դանիելյան, Երևան, 13 Հոկտեմբեր 2022

Վերջերս Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում մեկնարկեց հայագիտական միջազգային գիտաժողով՝ նվիրված 20-րդ դարի գրական, հասարակական ու մշակութային նշանավոր գործիչ Արշակ Չոպանյանի ծննդյան 150-ամյակին: Գիտաժողովը կազմակերպվել էր Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հայոց լեզվի և գրականության ամբիոնի հետ համատեղ:



Գիտաժողովին ներկայացված զեկույցները մեկ անգամ ևս արժևորեցին անվանի գիտնականի բազմավաստակ աշխատանքը հայ միջնադարյան գրականության ուսումնասիրության և առհասարակ հայագիտության տարբեր ոլորտների զարգացման գործում, ինչպես նաև ընդգծեցին Չոպանյանի հասարակական գործունեության կարևորությունը: Գիտաժողովի երկրորդ նիստը տեղի ունեցավ հոկտեմբերի 8-ին՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում:

Գրականության և արվեստի թանգարանի և Կոմիտասի թանգարան- հաստատութեան (ինստիտուտի) նախաձեռնությամբ տեղում բացվեց Արշակ Չոպանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված «Դարից երկար» խորագիրը կրող ցուցահանդեսը: Ցուցադրության բացման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ հոկտեմբերի 11-ին Կոմիտասի թանգարան- հաստատութեան (ինստիտուտի) ժամանակավոր ցուցադրությունների սրահում. ներկայացված էին փաստաթղթեր, լուսանկարներ և այլ արխիվային նյութեր, որոնք պատմում էին մեծանուն մտավորականների՝ Արշակ Չոպանյանի և Կոմիտասի բազմամյա բարեկամության, Կոմիտասի կյանքում Չոպանյանի կարևորագույն դերի մասին:



Ցուցահանդեսի բացմանը ելույթ ունեցան Գրականության և արվեստի թանգարանի տնօրեն Վահանգն Սարգսյանը, Կոմիտասի թանգարանի հաստատութեան (ինստիտուտի) տնօրեն Նիկոլայ Կոստանդյանը, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան ներկայացուցիչներ:

Գրող, քննադատ, բանասեր, լրագրող և հասարակական գործիչ Արշակ Չոպանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված «Դարից երկար» խորագրով ցուցահանդեսում ներկայացված են արխիվային փաստաթղթեր, լուսանկարներ, հետաքրքիր նյութեր, որոնք պատմում ու ընդգծում են երկու հայ մեծերի` դարից էլ երկար ձգվող բարեկամության, այդ բարեկամության կարևորության, մասնավորապես, Չոպանյանի հոգածությամբ Կոմիտասի ժառանգության պահպանման, հրատարակման, Հայաստան տեղափոխման գործում:



### **Գրականության և արվեստի թանգարանի տնօրեն Վահանգն Սարգսյան**

Մարինե Հարոյանը, ով ցուցադրության համադրողն է՝ նշեց, որ ցուցահանդեսն ունի վեց թեմատիկ բաժին, որոնցում գծանկարչական (գրաֆիկական) պատումների և իրերի (արտեֆակտ - artifact) համադրությամբ ներկայացրել են Կոմիտասի և Չոպանյանի անձնական ու ստեղծագործական շփումների մասին պատմող տարբեր դրվագներ, հատկանշական իրադարձություններ:

«Սպասված և երազված մարդը», այսպես է կոչվում առաջին բաժինը, և այդպես է Չոպանյանը բնորոշել Կոմիտասին: «Երբ Կոմիտասն առաջին անգամ 1901 թվականին գալիս է Փարիզ, հանդիպում է Չոպանյանին: Հանդիպումն այնքան է ցնցում Չոպանյանին, որ նա նշում է՝ դա իր կյանքի ամենահզոր տպավորություններից է եղել:

Նա այդ հանդիպման տպավորությունը հողվածներից մեկում համեմատել է միջնադարյան քնարերգուների ձեռագրերը Մխիթարյանների մոտ հայտնաբերելուց հետո ունեցած զգացողությունների հետ», - պատմեց Մարինե Հարոյանն ու հավելեց, որ ժամանակին Չոպանյանն աշխարհի ամենահայտնի հայ գործիչներից է եղել և հսկայական գործ է արել հայկական հարցի ճանաչման համար:



«Հայ երաժշտության հաղթարշավը», այսպես է կոչվում ցուցահանդեսի երկրորդ բաժինը: Այն անդրադարձ է երկու մեծերի երկրորդ հանդիպմանը, որը տեղի է ունեցել 1906 թվականին Փարիզում, երբ Չոպանյանը Կոմիտասի առաջին մեծ համերգն է կազմակերպում այնտեղ: «Այդ իրադարձությունը բեկումնային է լինում Կոմիտասի կյանքում, քանի որ նա միանգամից ճանաչում է ձեռք բերում միջազգային ասպարեզում: Այդ համերգից հետո մեկնում են շրջագայության Եվրոպայում: Հանդես են գալիս Շվեյցարիայում, Իտալիայում», - ներկայացրեց Հարոյանը:

Երրորդ բաժնում մեծ բարեկամների հանդիպումն է Մայր Հայրենիքում՝ Էջմիածնում: Չոպանյանն իր հողվածներից մեկում գրել է, երբ եկել է Էջմիածին, հասկացել է՝ որքան նեղ է այն Կոմիտասի համար:

«Աղետից առաջ», այսպես է կոչվում չորրորդ բաժինը: Այստեղ նրանց վերջին՝ 1914-ին Փարիզում կայացած հանդիպմանը վերաբերող նյութեր են: Այդ ժամանակ Կոմիտասը մասնակցում էր երաժշտագիտական մեծ համաժողովի, և նրա ելույթը մեծ արձագանք է գտնում:

Հինգերորդ բաժինը կոչվում է «Աղետ»: Այստեղ ներկայացված է միայն մեկ ցուցանմուշ՝ Հայաստանի պատմության թանգարանից. Չանդրի աքսորականների համրիչն է: Համրիչի հատիկների վրա անուններ են գրված, առաջինը Կոմիտասի անունն է:



Չոպանյանը մեղավոր է իրեն համարել, քանի որ ինքն է Կոմիտասին խորհուրդ տվել գնալ Պոլիս, այն ճակատագրական է եղել:

«Վերջին բաժինը կոչվում է «Դարից երկար»: Այդտեղ ներկայացվում է այն մեծ աշխատանքը, որը Չոպանյանն արել է Կոմիտասի և՛ հիվանդությունից, և՛ մահից հետո: Դա վերաբերում է Կոմիտասի ժառանգության հավաքման, հրապարակման և այդ ամենը Հայաստան բերելուն», - նշեց Մարինե Հարոյանը՝ ընդգծելով, որ ցուցահանդեսի գծանկարչական (գրաֆիկական) ձևավորողն է (կուլաժ) հեղինակը՝ Արմինե Շահբազյանը:

Թանգարան- հաստատութեան տնօրեն Նիկոլայ Կոստանոյանն էլ շեշտեց, որ ներկայացված նյութերը բերվել են Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանից, Հայաստանի պատմության թանգարանից, Հայաստանի ազգային

Ամսօրվա արձանագրությունները և Գոմիտասի թանգարան-հաստատություններից:



Միջոցառմանն աջակցել են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը և Ֆրանսիայի դեսպանությունը:

**There are no comments yet.**